

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	<p>Բաճկոն՝ սեզոնային, անթև (Ժիլետ) “ՍՉ գինվորի” ՀՀ ԱԱԾ սահմանապահ գորքերի, հաստատված գունավորմամբ, քողարկող կտորով: Բաճկոնի երեսացուն՝ ոչ պակաս 235 գրամ/մ2 մակերեսային խտությամբ, 50% պոլիէսթեր, 50% բամբակ բաղադրությամբ գործվածքից, գույնի կայունությունը համաձայն ԳՈՍՏ 29298-2005, նվազագույնը 4 անգամ լվանալու գույնի կայունությամբ: Բաճկոնի ներդիրը մշակվում է անջրաթափանց շերտով, որը մոդակարված է 200 գրամ/մ2 մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառացուն մշակվում է ոչ պակաս 90 գրամ/մ2 մակերեսային խտությամբ արհեստական գործվածքից: Բաճկոնը ներքին եզրից մինչև օձիքի վերին եզրը կոճկվում է պաշտպանական՝ համապատասխան գույնի կենտրոնական շղթայով (գլխիկները ամուր, դիմացկուն A դասի, տրակտոր տեսակի № 6), որի վրայից, ներքին եզրից մինչև օձիքի ներքին եզրը մշակված է երկկողմանի սեպածև եզրերով 7-7,5 սմ լայնության կափույր, որը ներսամասից՝ կոճկվում է իրարից հավասարաչափ հեռավորության վրա մշակված 4-5 հատ մետաղական կոճգամներով (13մմ-15մմ տրամագծով, YIK կամ YKK): Բաճկոնի կափույրի վրա վերևից 15-ից 16 սմ դեպի ներքև ամրացվում է կամրջակի միջով անցնող 4,6-ից 4,8 սմ լայնությամբ և 10-ից 12 սմ երկարությամբ պատա՝ կոչման տարբերանշանի համար: Պատայի ներքևի ծայրը սեպածև, որը եզրաշերտին ամրանում է կոճգամով: Կոչման տարբերանշանները ասեղնագործվում են ըստ Պատվիրատուի կողմից ներկայացված համապատասխան քանակներով կոչումների: Բաճկոնի օձիքը զարդակարված է շեղանկյուն կարերով, ներսից երեսպատված է ֆլիսե, համապատասխան գունավորմամբ կտորով, օձիքի բարձրությունը մեջտեղում 8-9 սմ է, եզրերում՝ 10-11 սմ լայնությամբ: Ախլակների վրա պետք է տեղադրված լինի 8.0-9,0 սմ</p>

երկարությամբ և 4,9-5,1 սմ լայնությամբ երեսացու գործվածքից հանովի օղագոտի՝ ասեղնագործ ուսադիր: Օձիքի և բաճկոնի թիկնամասի միացման կարում, ներսի կողմից մշակված է ամուր կախիչ: Առաջամասում մշակված են վրադիր չորս գրպաններ՝ կափույրներով, որոնցից երկուսը կրծքամասում, իսկ երկուսը՝ կողային մասերում: Կափույրների և գրպանների ներքին եզրերը թեք մշակված: Կրծքամասի ձևավոր գրպանների լայնությունը 15 սմ, երկարությունը 17 սմ կափույրի հետ միասին, կափույրի լայնությունը 6սմ, գրպանները տեղակայված են կենտրոնական ուղղահայաց շղթայից աջ և ձախ 6 սմ հեռավորության վրա: Ձախ գրպանին վրակարված է ևս մեկ փականով գրպանիկ: Առաջամասի կողային, ձևավոր վրադիր գրպանների լայնությունը 18,5 սմ, երկարությունը 21 սմ՝ կափույրի հետ միասին, կափույրի լայնությունը 7 սմ: Կողային գրպանները տեղադրված են բաճկոնի ներքին եզրից 2,5 սմ բարձրության վրա, գրպանները տեղակայված են կենտրոնական ուղղահայաց շղթայից աջ և ձախ 6 սմ հեռավորության վրա: Առաջամասի կողային վրադիր գրպանները՝ կողքից և վերևից մուտքերով են: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0,5սմ - 0,7սմ լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0,1 սմ կարի լայնությամբ: Առաջամասի վերին զույգ գրպանների կափույրները եզրերից կոճկվում են պաշտպանական գույնի բարձրորակ կպչուն ժապավեններով, իսկ ստորին գրպանները՝ նույն տեսակի մետաղական կոճգամներով: Բաճկոնի աստառի ձախ կրծքամասում երեսացուի կտորով, մշակված է 15սմ*17սմ չափսի կրկնակի ծոցագրպան, որը կոճկվում է շղթայով: Բաճկոնի ուսագոտիների եզրերը (բերանը) ծալված և վրակարված են, ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ 1,5-2.0 սմ: Գոտկատեղում մշակված են, 2,5 սմ լայնությամբ և 8,0-9,0սմ երկարությամբ ներկարված էլաստիկ ժապավեններ՝ իրանի չափսերի կարգավորման համար: Թիկունքամասի իջվածքը դեպի ներքև մշակված է 4-5 սմ-ով ավելի երկար, քան առաջամասի բարձրությունը, հաշվարկված ուսակարերից : Բաճկոնի վերին գրպանից վեր, առկա են ասեղնագործ 2.5*12.5սմ չափսի գրվածքներ՝ ձախ կողմում “ՀՀ ԱԱԾ”, իսկ աջ կողմում “ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՉՈՐՔԵՐ” : Արտաքին տեսքը՝ ըստ Պատվիրատույի կողմից ներկայացված նմուշի: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային պարկերով՝ յուրաքանչյուրում 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Պիտակավորումը: Բաճկոնի ներսի կողմից փակցվում է պիտակ՝ արտադրողի, չափս-հասակի, արտադրման տարեթվի և համազգեստի խնամքի վերաբերյալ գրառումներով: Պարկերը պիտակավորված են, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 3%:Ժիլետի արտաքին տեսքը՝ համաձայն Պատվիրատույի կողմից ներկայացված նմուշի: Չափս հասակային (42/2 - 64/6), (չափսերի եվրոպական սանդղակով՝ XS - 4XL) և կոչումային (սերժանտականից - գնդապետ) տվյալները Կատարողին կտրամադրվեն պայմանագրի կնքումից հետո:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԳԾ-ՏՆՏԿ-ԲԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱԼՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	